



«Միայն հավատք: Հավատք՝ անմահության, հավատք՝ հարության»:

Գարեգին Ա Կաթողիկոս

ՈՊԱԿԸ

ՎՐԱՐԱՏՅԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԱ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՍՄԱԹԵՐԹ

2024 Թ., ՄԱՐՏ 3 (488)



Սիրելի՛ հավատավոր զավակներ,

«Քրիստոս յարեալ ի մեռելոց» հրաշափառ ավետիսը վերստին զորացնում է մեր հավատքը և լցնում մեր հոգիներն անհուն բերկրությամբ: Իր հաղթական հարությամբ Հիսուս Քրիստոս ամենքիս պարգևեց փորձությունները հաղթահարելու, մահվանը հաղթելու և երկնքի արքայությունը ժառանգելու շնորհը:

Սիրելիներ, Քրիստոս հարություն առավ, որպեսզի բյուրեղանա ու զորանա մեր հավատքը և աստվածային սերն ու ճշմարտությունը հրաշագործեն մեր կյանքում՝ պարգևելով նվիրական իղձերի և նպատակների իրականացում:


Արքեպիսկոպոս Երևանի կյանքը վեհագույն արժեքների գիտակցությամբ՝ երկրայինի մեջ ամրագրելով հավիտենությունը, քանզի երկնքի արքայությունը մեր մեջ է. «Արքայությունն երկնքի ի ներքս ի ձեզ է» (Ղուկաս ԺԷ 21):

Թող Հարության կենարար խորհրդով Նորոգվի և պայծառանա մեր կյանքն ու Հայրենիքը, հաղթահարենք առկա փորձությունները և արժանանաք Տիրոջ կողմից մեզ պարգևած փրկությանն ու հավիտենական կյանքին. ամեն:

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ,
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»:

Սուրբ Հարության բերկրանքով և օրհնությամբ՝

ՆԱՎԱՍԱՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅՆՆ



«ԱՍՏՈՒԱԾ, ՈՐ ԵՒ ԶՏԵՐՆ ՅԱՐՈՅՑՑ, ԵՒ ԶԶԵԶ ՅԱՐՈՒՄՅԷ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ԻՒՐՈՎ»

Ա Կորնթացիս Զ 14

արտի 30-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ Աբ. Սարգիս եկեղեցուն մատուցվեց Սուրբ Հարության ճրագալույցի Սուրբ Պատարագ: Պատարագիչը Տ. Շահե քահանա Հայրապետյանն էր:

Հրնթացս Սուրբ Պատարագի տեր հայրն ընթերցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորանքը ուղղված Նավասարդ Արքեպիսկոպոսին: Ուղերձում մասնավորաբար ասվում էր. «Սիրելի՛ Արքեպան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից «Քրիստոս յարեալ ի մեռելոց» հրեշտակածայն ավետիսով հղում ենք Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքները Ձեզ, տիրախնամ թեմիդ հոգևոր դասին, թեմական ու ծխական խորհուրդների պատվարժան անդամներին և հավատավոր Մեր բոլոր զավակներին:

Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:



Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:

Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:

Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:

Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:

Սուրբ Պատարագի վերջում Նավասարդ Արքեպիսկոպոսը հավատաբարի գործերին և ձեռնարկումներին՝ ի փառս Աստծո, ի պայծառություն տիրախնամ Ձեր թեմի և Առաքելական մեր Սուրբ եկեղեցու...»:

Այս տարի մասնակիցները Հանրապետության հրապարակում կազմեցին Աշոտ Երկաթի հաղթական խաչը: Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանը, շնորհավորելով Սուրբ Հարության տոնը, իր խոսքում հույս հայտնեց, որ հայ ժողովրդի հաղթանակները չեն ուշանա:

ՆԱՎԱՍԱՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՏԱՐԱԳՅԷ

Մարտի 31-ին Սուրբ Հարության տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը առաջնորդանիստ Աբ. Սարգիս եկեղեցուն մատուցեց տոնական Սուրբ Պատարագ: Արքեպան հորը որպես առընթերակներ սպասավորում էին Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանն ու Տեր Շահե քահանա Հայրապետյանը:

Հրնթացս Սուրբ Պատարագի Արքեպան հայրն ընթերցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Հայրապետի՝ Սուրբ Հարության ուղերձը, ուր մասնավորապես ասվում էր. «...Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսն է հնչում այսօր մեր եկեղեցիների սուրբ խորաններից: Սքանչելա-

խորհուրդ ավետիսը հույսով ու հոգեմորոգ զգացումներով է պարուրում հայրենիքի ու ազգային կյանքի ցավերով ու կորուստներով դառնացած մեր սրտերը: Կյանքը հաղթանակել է, մահը պարտվել ու խորտակվել...»

Քրիստոս իր Հարությամբ մարդկությանը ազատել է չարի իշխանությունից, ցույց տվել ներման և սիրո ճանապարհը, հաշտություն հաստատել մարդու և Աստծո միջև և ընծայել հավիտենական կյանքի հույսն ու շնորհը: Աստվածորդու ողորմածությամբ կյանքի արշալույսն է տարածվել մահվան խավարի վրա:

Սիրելիներ, Սուրբ և Հրաշափառ Հարության տոնի այս լուսառատ օրը մեր սրտերից աղոթք բարձրացնենք առ Ամենակալն Աստված, որ աշխարհին պարգևի խաղաղություն ու բարօրություն, իր ամենախնամ Սուրբ Աջի հովվանիստ արքեպիսկոպոսի պատվով մեր հայրենիքի վրա և օրհնի ու երկնահեղ շնորհներով պայծառացնի ազգս հայոց՝ ապրելու ապահով ու անվտանգ կյանքով և փառավորելու Ամենասուրբ Երրորդությանը այժմ և միշտ և հավիտյանս. ամեն...»:

Սուրբ Պատարագի ավարտին Նավասարդ Արքեպան ներկա հայորդիներին փոխանցեց Սուրբ Հարության ավետիսը ու «Պատարագից» աղոթքով արձակեց նրանց:

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՄՓՈՓՎԵՑ ԳՐԱԲԱՐՁԱՆ ՄՐՅՈՒՅԹԸ

Մարտի 1-ին ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետում տեղի ունեցավ գրաբարի դպրոցական մրցույթի ամփոփումը: Արարատյան Հայրապետական թեմի Սուրբ-Մարաշի Սբ. Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Թովմա քահանա Անդրեասյանը մրցույթը սկսեց աղոթքով, ապա փոխանցեց Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոչյանի հայրական օրհնությունն ու երախտիքի խոսքը:

Տեր հայրը երրորդ փուլ անցած խմբերի ուսուցիչներին հանձնեց Նավասարդ Սրբազանի Օրհնագրերն ու գրքեր: Օրհնագրում ասվում է. «Սիրելի նվիրյալներ, դուք կամավորաբար ու մեծ սիրով դարձել եք այն անոթը, ում ցանած հունդերի և նվիրական ջանքերի շնորհիվ հայ պատանիները

աշակերտները ներկայացել էին գրաբարի ընթերցանությանը: Ժյուրին գնահատում էր գրաբար ընթերցելու, ընթերցանության կանոններն իմանալու և տեքստը հասկանալու հանգամանքը:

Երրորդ փուլին մասնակցում էր շուրջ 70 պատանի՝ 28 ուսուցիչների գլխավորությամբ: Սա նախագծային փուլ էր, որին հիմնականում մասնակցում էին թիմերով, թեև կային նաև անհատական աշխատանքներ: Աշակերտները ստեղծել են տարբեր նախագծեր դասական հայերենով՝ կոմիքսներ, տեսանյութեր, շարժանկարներ, թատերական ներկայացումներ: Կային աշխատանքներ, որոնց տեքստերը պատանիներն իրենք էին թարգմանել:

Այս մտածումով է, որ 2014 թ. Նավասարդ Սրբազանի օրհնությամբ Արարատյան Հայրապետական թեմը կազմակերպել է «Գրաբարյան օրեր» ծրագիրը, մասնակից ու աջակից եղել գրաբարին նվիրված մրցույթներին ու ծրագրերին:

շնորհավորելով՝ Սրբազան հայրը եկեղեցիների պատկերներով կախազարդեր նվիրեց ու մաղթեց, որ ընտանիքները կառուցեն քրիստոնեական, հայկական արժեքներով:

Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Գրիգոր Հարությունյան) հանդես եկավ պրեմիերայով. առաջին անգամ կատարեց սուրբ Սարգսին նվիրված երգը (հեղ.՝ Գրիգոր Հարությունյան), ինչն արժանացավ ներկաների բարձր գնահատանքին: Նավասարդ Սրբազանի կարծիքով՝ երգն իր մեղեդայնության շնորհիվ կսիրվի հատկապես երիտասարդների կողմից ու կարող է դառնալ նրանց երգացանկի մասը: Երգչախումբը ևս մի քանի խմբերգեր կատարեց:

Երեկոյի տրամադրությունը հաղորդողն ու բլոգի մագալին շուրջպարի մեջ ներգրավողը, ինչպես միշտ,



ընդ հաղորդակից են դառնում հայոց Ոսկեդարից մեզ հասած ժառանգությանը: Դուք ուղղորդվում եք՝ «Նավարը հավերժ անիծելու փոխարեն ոչ միայն մեկ մոմ վառենք, այլև ամեն մեկս դառնանք մեկ մոմ և լուսավորենք» կարգախոսով:

Գրաբարի հետ հաղորդակցումը հայրենասիրության, հայրենիքը զգալու, մեր գրական ժառանգության հետ կենդանի կերպով առնչվելու մի գործընթաց է, որի տքնաջան իրագործմամբ Դուք հայկականությունը վերաթմայացած, վերածաղկյալ վիճակով հաստատում եք մատաղ սերնդի հոգիներում:

Վստահ ենք, որ նրանցից շատերն իրենց էությանը կդառնան մեր գրական ու գիտական ժառանգության լուսավորիչները, այդ լուսավորության տարածման գինվորները և կանոնադրվեն այս հոգեշահ առաքելությանը, որպեսզի լույսն արեզակնային լինի, և ճառագայթները տարածվեն մեր երիտասարդների մտքի, հոգու և սրտի մեջ: Վստահ ենք, որ նրանք կդառնան որակապես առավել ազնվացած հայեր ու կկարողանան պատկանել այդ արժեքներին և դրանք կրելով իրենց մեջ՝ կտարածեն նաև իրենց ընտանիքներում և իրենց միջավայրից ներս:

Մեր մաղթանքն է, որ Բարձրալուս Աստուծո Սրբասուրբ Աջը զորավիգ լինի Ձեզ և Ձեր ընտանիքին, և երկնավոր Տիրոջ բարեսեր կամքով ապրեք արևաշատ ու խաղաղ օրեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արշալույս Գալստյանը բարձր գնահատեց ոսկեղենի գրաբարին նվիրված մրցույթի գաղափարն ու անցկացումը: ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի Հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ Աննա Աբաջյանը, որը մրցույթի կազմակերպման սկզբից ներգրավված է եղել աշխատանքներում, ասաց, որ իր համար սա կրկնակի տոն է, քանի որ մասնակից ուսուցիչների շարքում տեսել է իր ուսանողներին: Դասական դպրոցի տնօրեն Մանե Ղազարյանը ներկայացրեց մրցույթի անցկացման կարևորությունը, պատմեց, թե որքան ոգևորիչ էր մասնակիցների մեծ քանակն ու նրանց հետաքրքրվածությունը:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժնի կողմից առանձնացված լավագույն 5 աշխատանքների հեղինակները նվեր ստացան գլուխկոտրուկներ, որոնցով կառուցելու են էջմիածնի Մայր Տաճարի եռաչափ մակետը: Դրանցից 3-ը նվեր ստացան Սյունիքի մարզի Դավիթ Բեկ համայնքի դպրոցականներին: Գլուխկոտրուկները տրամադրել էր Արմեն Ավետիսյանը:

Մրցույթը եռափուլ էր: Առաջին երկուսի ընթացքում

ՆԵՎԱՍԱՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԻՆՏԵՂԵԿՏ ԵՐԻՏԱՍՍԱՐԳՆԵՐԻ ԻՆՏ

Մարտի 3-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոչյանն ընդունեց թեմի Կաթողիկե Սուրբ Աստվածածին և Սուրբ Աննա եկեղեցիների «Գանձեր» երիտասարդաց միության անդամներին: Հանդիպմանը ներկա էր առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու երիտասարդները Տեր Արսեն քահանա Սարոյանի գլխավորությամբ եկել էին թեմի առաջնորդարան՝ Սրբազան հոր օրհնություն-



ընդ ստանալու: Հանդիպման ընթացքում Սրբազան հայրը երիտասարդների հետ զրուցեց ազգային ինքնության և քրիստոնեական դավանաբանական հարցերի մասին, պատասխանեց նրանց հուզող հարցերին: Զրույցի ավարտին Սրբազան հայրը «Պահպանիչ» աղոթքով արձակեց երիտասարդներին:

ԵՐԻՏԱՍՍԱՐԳՆԵՐԸ ՆՇԵՑԻՆ ՄԻՋԻՆՔԸ

Մարտի 6-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կոչյանի հանդիսապետությամբ թեմի առաջնորդարանում նշվեց Միջինքը:

Թեմի երիտասարդական միությունների հոգևոր հովիվ Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի հովվությամբ երիտասարդներն ամեն տարի նշում են Միջինքը՝ նպատակ ունենալով վերականգնել հայկական ազգային տոնական համակարգի երբեմնի ժողովրդականությունը:

Նավասարդ Սրբազանի նախագահությամբ տոնը սկսվեց «Տերունական աղոթք»-ով: Ապա տեր Պետրոսի առաջարկությամբ Սրբազան հայրը սկուտեղի վրա ցանցեց զատկական ածիկի ցորենի առաջին հատիկները: Սրբազան հայրը կտրեց Միջինքի տոնական բաղադր զաթան, որի մեջ նշան էր դրված:

Խոսելով երիտասարդաց միությունների մասին՝ տեր Պետրոսն ասաց, որ թեմի միությունների 4 անդամներ նշանվել են ու շուտով ընտանիք են կազմելու: Նրանց



«Վարք հայոց» ազգագրական երգի-պարի խումբն էր (գեղ. ղեկավար՝ Սարգիս Փարամազյան):

Տոնի առթիվ թեմի երիտասարդաց միություններից յուրաքանչյուրը պահոց ուտեստներ էին պատրաստել, որոնք ավանդաբար մատուցվել են Միջինքի ժամանակ: Ազգային խոհանոցի մոռացվող ուտեստները և երիտասարդների հետևողական ջանքերով վերականգնվում են տոնական միջոցառումների ժամանակ ներկայացվելով ու մատուցվելով:

Միջինքը նշվում է Մեծ պահքի 24-րդ օրը: Այդ օրը Մեծ պահքի օրերը կհսվում են: Այն եկեղեցական նշանակություն չունի և Մեծ պահքը չի ընդհատում:

ՌՈՒՍԱԿԱՆ ԻՍՏԱՅՆՔԸ ՏՈՆԵՑ ԲԱՐԵԿԵՆՈՒՆԸ

Մարտի 14-ին Երևանում նշվեց Ռուս Ուղղափառ եկեղեցու Բարեկենդանը:

Միջոցառման կազմակերպիչներն էին Երևանում Գիտության ու մշակույթի ռուսական կենտրոնը և Երևանի Ռուսական արվեստի թանգարանը:



Այս տարի տոնին մասնակցեց նաև Արարատյան Հայրապետական թեմը: Կազմակերպիչների կողմից հատկացվել էր տաղավար, որտեղ թեմի երիտասարդաց միության անդամները, Սբ. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պետրոս ավագ քահանա Մալյանի առաջնորդությամբ, ներկայացրին ազգային ուտեստներ, որոնք հատուկ են Բարեկենդանին: Սեղանին էին դրված նաև պահոց չրջանի ուտեստներ: Երիտասարդները ներկայացրին նաև ազգային խաղեր: → էջ 3

Էջ 2

Երևանում Գիտության ու մշակույթի ռուսական կենտրոնի մամուլի բաժնի պատասխանատու Ելենա Շուվալան տեղեկացրեց, որ տոնը տևում է մեկ շաբաթ ու յուրաքանչյուր օրվա համար կան հատուկ սովորություններ:

«Այս տարի մասնակցում է Արարատյան Հայրապետական թեմը ևս, քանի որ Հայ Առաքելական Եկեղեցին ունի նմանատիպ տոն: Ինչպես Հայ Եկեղեցում, այնպես էլ Ռուս Եկեղեցում կարևոր են ընտանեկան արժեքները, ավանդույթները, պատմությունը: Այդ պատճառով այս տարի որոշեցինք միավորվել»,- նշեց Ելենա Շուվալան:

Ռուս Ուղղափառ Եկեղեցին, տոնելով Բարեկենդանը, պատրաստվում է պահոց շրջանին: Տոնը մաս համարվում է ձմռան ու գարնան սահմանը:

ՆԱԿԱՍԱՐԳ ՍՐԲԱՉԱՆՆ ԾՐՈՒՅԵՑ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Մարտի 24-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնեց Ծաղկազարդը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ մուտքը Երուսաղեմ: Տոնի առթիվ բոլոր եկեղեցիներում մատուցվեց բաց խորանով Սուրբ Պատարագ:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդահիստ Աբ. Սարգիս եկեղեցում Ծաղկազարդի տոնական Սուրբ Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսատեսությամբ: Պատարագիչն Տեր Անուշավան քահանա Կոչեցյանն էր:

Ն. Ա. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ծաղկազարդը հռչակված է Մանուկների օրհնության օր:



Հավարտ Սուրբ Պատարագի Նավասարդ Սրբազանը կատարեց Մանուկների օրհնության կարգ: Ընդհանրապես լավ Ծաղկազարդի տոնի առթիվ՝ Սրբազան հայրը սերն ու օրհնությունը փոխանցեց մանուկներին և մաղթեց, որպեսզի նրանք զորաման Տիրոջ կամքով ու Սուրբ Հոգու շնորհներով:

Ապա Նավասարդ Սրբազանը «Պահպանիչ» աղոթքով արձակեց ներկաներին:

Ծաղկազարդից սկսվում է Տիրոջ երկրային կյանքի վերջին՝ Ավագ շաբաթը, որի բոլոր օրերն ունեն իրենց խորհուրդները:

ՉԱՏԿԱՎԱՆ ՓՈՒՍՏՈՆ

Երևանի Ջորավոր Աբ. Աստվածածին եկեղեցու բակում մարտի 31-ին տոնական տրամադրություն էր: Երեխաներն ու պատանիները ցուցադրում էին իրենց ձեռքի աշխատանքները, հանդես գալիս երաժշտական կատարումներով: Սուրբ Հարության տոնին իրականացվեց «Ձատկական փառատոն» միջոցառումը: Այն անցկացվեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ:

Տոնակատարությունը մեկնարկեց «Տերունական աղոթք»-ով: Ջորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Վահան քահանա Առաքելյանը, շնորհավորելով Սուրբ Հարության տոնի առթիվ, իր օրհնությունը փոխանցեց ներկաներին:

Միջոցառման նախաձեռնողը «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»-ն էր: Կենտրոնի տնօրեն Աննա Կարապետյանը նշեց, որ «Ձատկական փառատոն»-ը ներառական միջոցառում է, և նպատակ ունեն ստեղծել մշակութային հարթակ երեխաների, պատանիների ինքնադրսևորման համար:

«Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն»-ը ապահովում է անվճար գեղարվեստական կրթություն սոցիալապես անապահով, հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին: Այսօր ժամանել են տարբեր մարզերի մեր խմբակների երեխաները: Ներկայացնում են իրենց տարվա աշխատանքները»,- նշեց Աննա Կարապետյանը:

«Տարվա ընթացքում տարբեր միջոցառումներ ենք իրականացնում, որպեսզի խոցելի խմբերին ինտեգրենք հասարակություն, ցույց տանք իրենց արարելու ներուժը: Անպայման իրականացնում ենք Ձատկան նվիրված փառատոն, քանի որ տոնը կարծես մոր կյանքի խորհրդանշան է»,- ասաց կենտրոնի տնօրենը:



Հանդես եկան «Վահագն» ավանդական երգի-պարի խումբը, խարբերդի մասնագիտացված մանկատունը:

Մարտի 31-ին Սուրբ Հարության տոնը ազգային երգ ու պարով, խաղերով, Ձատկան նվիրված ցուցադրություններով նշվեց Երևանի մանկական զբոսայգում: Միջոցառմամբ տրվեց «Արատա» կրթամշակութային ազգային ծրագրի մեկնարկը:

Միջոցառումն իրականացվեց նաև Արարատյան Հայրապետական թեմի աջակցությամբ: Տոնակատարությունը մեկնարկեց «Տերունական աղոթք»-ով: Կաթողիկոս Սուրբ Աստվածածին և Սուրբ Աննա եկեղեցիների խորհրդակատար Տեր Արսեն քահանա Սարոյանը ներկաներին փոխանցեց Քրիստոսի Հարության ավետիսը և կատարեց Տնօրինի արարողությունը:

ՍՈՒՐԲ ԻՆՏԵՐԻՅՆ ՏՈՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆՈՒԿԱՆ ՉՐՈՍԱՅԳՈՒՄ

Մարտի 31-ին Սուրբ Հարության տոնը ազգային երգ ու պարով, խաղերով, Ձատկան նվիրված ցուցադրություններով նշվեց Երևանի մանկական զբոսայգում: Միջոցառմամբ տրվեց «Արատա» կրթամշակութային ազգային ծրագրի մեկնարկը:

Միջոցառումն իրականացվեց նաև Արարատյան Հայրապետական թեմի աջակցությամբ: Տոնակատարությունը մեկնարկեց «Տերունական աղոթք»-ով: Կաթողիկոս Սուրբ Աստվածածին և Սուրբ Աննա եկեղեցիների խորհրդակատար Տեր Արսեն քահանա Սարոյանը ներկաներին փոխանցեց Քրիստոսի Հարության ավետիսը և կատարեց Տնօրինի արարողությունը:



«Սուրբ Հարության տոնն ունի հաղթանակի խորհուրդ: Հաղթանակ կլինի, երբ կլինի համախմբում, Քրիստոսին առաջնորդ ընդունելով՝ պետք է հաղթանակ տանենք մեղքի, չարի ու մահվան, ներքին թշնամու դեմ, որպեսզի կարողանանք ազգովի մտրամոր հաղթանակներ տանել»,- իր խոսքում նշեց քահանան:

«Արատա» ծրագիրը պատկանում է «Հայր կա» հասարակական կազմակերպությանը: ՀԿ փոխտնօրեն Վարդուհի Թովմասյանը նշեց, որ ծրագրի ընթացքում երեխաները հնարավորություն ունեցան ցուցադրելու իրենց ձեռագործ աշխատանքները, մասնակցեցին վարպետաց

դասերի և կրթական դասընթացների:

«Ցուցադրվեցին «Արար» ազգային արվեստի կենտրոնների սաների ձեռագործ աշխատանքները, ժողովրդական արհեստագործական վարպետների ձեռագործ աշխատանքները, զուգահեռ ցուցադրվեցին արցախյան ավանդական ուտելիքներ: Իրականացվեցին մանրանկարչության, կերպարվեստի, կարպետագործության, փայտագործության, թաղիքագործության և խաչքարագործության վարպետաց դասեր»,- նշեց Վարդուհի Թովմասյանը:

Միջոցառմանը մասնակցեցին անվանի ժողովրդական վարպետներ, պարային ու այլ երաժշտական խմբեր: Կատարումներով հանդես եկավ «Երաժիշտների միություն» հասարակական կազմակերպության «Արցախի զարկերակը» վոկալ-գործիքային անսամբլը:

«ՉԱՏԿԱՎԱՆ ՖԵՍՏ» ՓՈՒՍՏՈՆԸ՝ ԵՐԵՎԱՆԻՄ

Մարտի 31-ին տարբեր գույների, ձևերի հավկիթներ էին ներկայացված Երևանում՝ Շառլ Ազնավուրի հրապարակում: Սուրբ Հարության տոնին տարբեր ժանրերով ստեղծագործողների վրձնով հավկիթները հետաքրքիր դրսևորումներ ու նոր շունչ ստացան: Անցկացվեց «Ձատկան Արտ Ֆեստ» փառատոնը:

Միջոցառումը սկսվեց աղոթքով: Ջորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Վահան քահանա Առաքելյանը ներկաներին փոխանցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի



օրհնությունն ու շնորհավորանքը:

«Առաջնորդվեց Սուրբ Հարության լույսով, ապրենք կյանքը՝ քրիստոնեական արժեքների սկզբունքների համաձայն: Լինենք ճշմարիտ քրիստոնյա»,- իր խոսքում նշեց հոգևորականը:

Միջոցառման ընթացքում անցորդները հնարավորություն ունեցան տեղում հետևելու աշխատանքների ստեղծման գործընթացին:

«Նման միջոցառումներ կազմակերպում ենք արդեն մի քանի տարի: Այս տարի կազմակերպեցինք փառատոնի ձևաչափով, ներկա էին 50-ից ավելի նկարիչներ: Յուրաքանչյուրը կարծես իր արվեստը ներկայացրեց հավկիթների միջոցով»,- նշեց փառատոնի կազմակերպիչ Իլյա Մանթալյանը:

Հավելեց նաև, որ իրենց հիմնական նպատակն է աշխատանքների վաճառքից գոյացած միջոցները փոխանցել բարեգործական հիմնադրամներին ու նկարիչներին:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին բեմադրություններ, երաժշտական խմբերի ելույթներ, արվեստի շուրջ վարպետաց դասեր: Ելույթ ունեցավ «Ծաղկազարդ» երգչախումբը:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին



ԿՅԱՆՔ, ՀԱՂԹԱՆԱԿ՝ ՄԱՅՎԱՆ ՈՒ ՀՈՒՍԱՅԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

«Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի»։ այս խոսքերով տալիս ենք ավետիսը Սուրբ Հարության մահվան ու չարի դեմ հաղթանակի, արձանագրում, որ վերջին խոսքը ոչ թե մահվանն է, հուսահատությանը, այլ կյանքինը։ Ինչպես ապրել նորոգված մեր մեջ ունենալով աստվածային լույսը, գատվել մեղքերից, վերադառնալ դեպի Տերը։ Արարատյան Հայրապետական թեմի քահանաներն իրենց պատգամներն են հղել տոնի կապակցությամբ։

❖ «Հիսուս Քրիստոս գալիս է՝ բախելու մեր սրտի դռները։ Նա պետք է մուտք գործի մեր հոգևոր տաճար՝ մեր սիրտը, մեր հոգու մեջ, պայծառակերպի, լուսավորի մեզ։ Մենք կարիք ունենք Քրիստոսի կողմից մեր հոգում բերված զարնան, թարմության, հոգևոր լիցքի։ Թող Տիրոջ սերը, օրհնությունը, մեր հոգիների ծաղկազարդ բերեն խաղաղություն և զորություն»։

❖ «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հարությունը հաղթանակ է չարի, մահվան, մեղքի, խավարի, վատ սովորությունների դեմ։ Մենք հավատով զինված պետք է կարողանանք ապավինել Աստծուն։ Պետք է մաքրվենք Նրա շնորհներով, լույսով ու սիրով։ Մասնակիցը լինենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի տարած հաղթանակին՝ հոգևոր և ֆիզիկական իմաստով»։

քից, բերեն բարի պտուղներ։ Մեր սիրտը պետք է լցված լինի սիրով, խոնարհությամբ, հոգատարությամբ, քաղցրությամբ, լույսով։ Միավորվելով Աստծո հետ՝ ընթանանք դեպի փրկության նավահանգիստ»։

Տեր Զոհն քահանա Արքայանյան Նորբ-Մարաշի Աբ. Աստվածածին Եկեղեցու ծխակատար քահանա

❖ «Հստակ է, որ Քրիստոս բոլորի համար Իր կյանքը տվեց և հարություն առավ։ Կարևոր հարցն այս է՝ արդյո՞ք այդ ավետիսը կհասնի ինձ, արդյո՞ք Տերը ինձ համար, իմ կյանքում հարություն կառնի։ Հարցի փնտրտուքի ճանապարհին մենք վախենում ենք մեր կյանքը, օրն ապրել առանց Քրիստոսի, որովհետև առանց Քրիստոսի ի՞նչ քրիստոնեություն։ Հուզան դավաճանեց Նրան, Պետրոսը երեք անգամ ուրացավ Տիրոջը, Մարկոսը մերկ փախավ, աշակերտները լքեցին, միայն մնաց Քրիստոս Իր քաջությամբ, սիրով՝ Իր կյանքը տալով մեր փրկության համար։ Տիրոջ խաչելությունը մեր փրկության կարևոր երաշխիքն ու գրավականն է ոչ թե նրա համար, որ խաչելությունը մահվան ամենաժանր տեսակն էր, այլ որովհետև Աստված շատ սիրեց մեզ։ Հիմա խաչի վրա Հիսուս դիմում է մեզ, ասելով՝ այս ամենն արեցի ձեզ համար, իսկ դուք ի՞նչ եք Ինձ համար անելու»։

❖ «Ամեն ինչի, նաև աստվածային օրենքների, պատվիրանների հիմքում սերն է։ Եթե սիրենք, չենք դավաճանի, չենք սպանի, գողանա, շնանա։ Աստված Իր Միածին Որդուն զոհեց հանուն մարդկության փրկության, Հիսուս եկավ, Իր կյանքը զոհեց՝ հանուն աստվածային սիրո։ Մենք, ցավոք, այդպես էլ չհասկացանք ու չընդունեցինք այդ մեծ զոհողությունը։ Աստված մեզ տալիս է ամեն բան՝ երկիր, ազատ կամք ու բանականություն՝ տեսնելու, ընկալելու, գիտակցված կյանք ապրելու։ Մենք ենք որոշում արժանանալ երկրյա արքայությանը, թե՞ հակառակը։ Մենք ենք որոշում ծառայել աստվածային օրենքներին, թե՞ հակառակը։ Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է ապրի ապաշխարությամբ, որպեսզի արժանանա Տիրոջ ողորմությանը»։

❖ «Մենք հաճախ մտածում ենք միայն աշխարհիկ մասին։ Զբաղվում ենք առօրյա կյանքով, որը շատ հեռու է Տիրոջից։ Հեռանալով Աստծուց, դրժելով աստվածայինը՝ չենք մտածում, որ երկնքի ժառանգորդ պիտի դառնանք։ Եթե քրիստոնյայի կյանքը պիտի լինի առանց լուսեղեն պսակ ստանալու, ուրեմն զուր է։ Յուրաքանչյուր մարդ պետք է ձգտի Աստծո կողմից այդ գովեստը ստանալուն՝ երբեք թիկունք չդարձնի Աստծուն, երբեք չդավաճանի Նրան, այլ միանա Տիրոջն ու փրկվի»։

❖ «Մեր փրկությունը սկսվում է Քրիստոսի Հարությամբ։ Մենք կարծես հաղթում ենք մահվանը։ Հարությամբ տեսնում ենք, որ մահն այնքան էլ սարսափելի չէ և ամեն ինչի վերջակետը չէ։ Հարությունը մեզ տալիս է վերափոխվելու հնարավորություն»։

Տեր Բարդուղիմեոս քահանա Հակոբյան Աբ. Նահատակաց Եկեղեցու հոգևոր հովիվ

❖ «Սուրբ Հարությամբ բացվեց փրկության ճանապարհը, որին սպասում էր յուրաքանչյուրը։ Մարդկությունը ստացավ մեծ մարգարեության պատասխանը, մարդիկ լուսավորվեցին։ Քրիստոս Հարությամբ հաստատեց Իր ճշմարիտ Աստված լինելը։ Սուրբ Պատարագի ժամանակ Սուրբ Հաղորդությամբ մենք կարողանում ենք Քրիստոսին վերաբնակեցնել մեր մեջ»։

Տեր Պարթև քահանա Մուրադյան Արաբկիրի Աբ. հաչ Եկեղեցու հոգևոր հովիվ

Տեր Եսայի քահանա Արթնյան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն

Տեր Զաքարիա քահանա Ավետիսյան Նորբ-Մարաշի Աբ. Աստվածածին Եկեղեցու հոգևոր հովիվ

Տեր Ղուկաս քահանա Բալայան Էրեբունի համայնքի հոգևոր հովիվ

❖ «Աստված մեզ ստեղծել է, պահպանել, օրհնել, Իր Միածին Որդուն զոհաբերել մեզ համար։ Փոխարենն ի՞նչ կարող ենք մենք տալ, ի՞նչ է Աստված ցանկանում։ Կարող ենք տալ մեր սիրտը, որի մեջ պետք է բնակվի Տերը։ Մեր գործողություններն ամբողջությամբ պետք է բխեն Աստծո կամ-

Պատրաստեց Անի ԱՎԱԳՅԱՆԸ

ԲԱՐՍԵՂ ՄԱՆԿԵՎՈՐՑԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Եվ ներս, գերեզման մտնելով՝ տեսան մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած, և զարհուրեցին»։

Մարկոս 16:5

«Եվ ներս, գերեզման մտնելով»։ հայտնի է, որ ժամի մեջ փորված տուն էր, հակառակ դեպքում այդքան կանաչ չէին կարող գերեզմանի մեջ մտնել։ Այլ ինչպես ասացինք, Քրիստոսի գերեզմանը ժամի մեջ փորված տուն էր, և արևելյան կողմից դուռ ուներ, իսկ հյուսիսային կողմից վիճափոր տուն էր, որտեղ Քրիստոսի գերեզմանն էր։ Դրա համար էլ ասում է՝ մտան ներս, և ոչ թե՛ գերեզման։ Արդ, վիճափոր տնից ներս մտնելով, որտեղ գերեզմանն էր, տեսան Չարիելը՝ հրեշտակին՝ երիտասարդի կերպարանով։



«Հարություն», «Հայտնավոր», 1592 թ. Ծաղկող՝ Պողոս Մեղեղեցի

Ինչպես սկզբում ավետարանիչն ասաց, կանաչք անուշահոտ յուղ և խունկ էին բերել։ Յուղն ու խունկը ցույց է տալիս կանաչ սուրբ և մաքուր միտքը, որով կարողացան նայել և տեսնել հրեշտակին՝ երկնային քաղաքացուն, որովհետև հրեշտակներին կարելի էր տեսնել միայն սուրբ սրտով և մաքուր մտքով, այլ ոչ թե տեսանելի լույսով և մարմնավոր աչքերով։ Արդ, քանի որ կանաչք սուրբ էին մարմնով և հոգով, դրա համար տեսան երիտասարդին, որ հրեշտակն էր։ Հրեշտակը երիտասարդի կերպարանով երևաց, այլ ոչ ծերի կամ պատանու՝ ցույց տալու համար Հարության մեծ և կատարյալ խորհուրդը։ Եվ երիտասարդի կերպարանով երևաց՝ ավետելով Հարությունը, և ցույց տալու, որ վայելելու ենք կատարյալ և լիարժեք Հարությունը՝ հոգևոր և աստվածային ուրախությամբ, ինչպես որ երիտասարդներն են կատարելապես վայելում աշխարհային ուրախությունները։

և անապի, ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Որպեսզի նա իր առաջ փառավոր կերպով կանգնեցնի Եկեղեցին, որ ոչ մի արատ կամ աղտոտություն կամ նման բաներից ոչինչ չունենա, այլ լինի սուրբ և անբարատ» (Եփեսացիս 5:27)։ Եվ ինչպես այժմ մարմինը ծածկում է հոգուն, այնպես հոգին է ծածկելու մարմնին, ըստ

այն, թե. «Որպեսզի ինչ որ մահկանացու է, կլանվի կյանքից» (Բ Կորնթացիս 5:4), այսինքն՝ այստեղ մարմնին է հոգուն ծածկում, այստեղ հոգին է մարմնին ծածկելու, քանի որ բնական հոգին բոլոր մարդիկ հավասար ունեն՝ տղամարդ, թե՛ կին, ծեր, թե՛ երեխա, ուստի հարյուրամյա ծեր է, թե՛ մեկօրյա մանուկ, նույն հոգին ունեն, և որևէ մեկը չի կարող մեծ և փոքր, տաղը և գեղեցիկ հոգի ունենալ։ Հետևաբար, բոլոր մարդկանց հոգիները հավասար են, դրա համար էլ հարության ժամանակ բոլորը լինելու են երիտասարդ տարիքի։ Նաև արու և էգ չեն երևալու, ըստ Քրիստոսի վկայության։ Քանզի, ինչպես դրաստում Ադամն ու Եվան անմեղության ժամանակ չէին ճանաչում միմյանց որպես արու և էգ, այդպես էլ այն ժամանակ մարդկանց մեջ չի երևալու։ Դրա համար էլ Քրիստոս ասաց, թե. «Հարության ժամանակ ոչ կին են առնում և ոչ էլ մարդու գնում, այլ կլինեն՝ ինչպես հրեշտակները երկնքում» (Մատթեոս 22:30)։

«Տեսան մի երիտասարդի, որ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած, և զարհուրեցին»։ քանի որ շատ են մարդիկ, որ մահվանից վախենում և զարհուրում են, դրա համար հրեշտակը լուսավոր գգեստով և պայծառ դեմքով երևաց՝ գործնականում ցույց տալով և քարոզելով Հարության մեծ և անպատում պատիվն ու փառքը, որպեսզի մահվանից սարսափածները քաջավերվեն, այլ ոչ թե երկնքն և անգիտանան և հոժարությամբ գնան մահվան ընդառաջ, ինչպես Քրիստոս, որպեսզի արժանանան այդպիսի փառքի։

«Նստած» ասելով ցույց է տալիս թագավորական պատիվը, որին արժանանալու ենք հարության ժամանակ, քանզի Քրիստոսի մեծագույն պատիվը թագավորական գահին բազմելն է։ «Նստելը» նաև

նշանակում է միշտ հաստատուն և հավերժական լինելը։

«Նստած էր աջ կողմը»։ ձախ կողմը նշանակում է աշխարհի վայելքները, որոնք առօրյա և ժամանակավոր են, իսկ աջ կողմը՝ բարի գործերն ու առաքինությունները, որ նշանակում է հավիտենական կյանք։

«Սպիտակ պատմուճան հագած»։ քանի որ Քրիստոս անցավ ապականացու անցավոր կյանքով, ուստի և հրեշտակն էլ, որ եկել էր ավետարանելու Նրա կյանքը՝ հավիտենական և անվախճան՝ նստած էր աջ կողմը՝ սպիտակ պատմուճան հագած։ Եվ այդ պայծառ գգեստով, առանց խոսքի և աղաղակի ավետում էր իր և մեզ համար ուրախության տոնը։ Քանզի մենք մեր Տիրոջ Հարությամբ զգեստավորվեցինք անմահությամբ և անապականությամբ։

Մատթեոսն ասում է. «Հրեշտակը նստեց քարի վրա» (Մատթեոս 28:2), և նույն հրեշտակը պատվիրեց կանաչք ներս մտնել և տեսնել այն տեղը, ուր պառկած էր, որ տեսնեն, թե հարություն է առել (տես Մատթեոս 28:6)։ Ղուկասն ասում է. «Ներս մտան և Տեր Հիսուսի մարմինը չգտան, և մինչև նրանք զարմացած էին այդ բանի վրա, լուսավոր գգեստներով երկու մարդիկ երևացին նրանց և հանդիմանեցին նրանց՝ ասելով. ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում։ Այստեղ չէ, այլ՝ հարյավ։ Հիշեցե՛ք՝ ինչպես խոսեց նա ձեզ հետ, երբ Քալիլիայում էր. ասում էր, թե պետք է, որ մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի, խաչվի և երրորդ օրը հարություն առնի» (Ղուկաս 24:4-7)։

Արդ, հարություն առավ, ինչպես որ ասել էր, ուստի եթե մեզ չէք հավատում, Նրա խոսքերը հիշեք, որ ասում էր, թե երրորդ օրը հարություն է առնելու։ Ստուգապես Քրիստոս հարություն առավ։

Փոխակերպումը գրաբարից՝ Գայանե ԹԵՐԶՅԱՆԻ

ԴՐԱՆՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ՍԻՄՈՆՆ ՈՒ ԱՍՅԱՆ...

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի ընթերցողներ, մեր գրուցակիցներն են Սիմոն Դարբինյանն ու Ասյա Դիլանյանը:

Նրանց ընտանիքը տասնմեկ տարեկան է: Ապրում են Շիրակի մարզի Ախուրյան համայնքում: Ունեն երեք զավակ՝ Էվելինան, Հարությունն ու Հենրիկն:

Սիմոնն ընտանեկան բժշկական ստոմատոլոգ է, Ասյան՝ հիդրոօդերևութաբան: Ամուսինները սիրում են իրենց աշխատանքն ու այն ընտանեկան հյուրընկալ հարկը, որ ստեղծել են երկուսով: Դրա համար էլ կարողանում են աշխատանքային ծանրաբեռնված գրաֆիկը հիանալիորեն համատեղել ընտանիքի առօրյային:

Ձույզը հունորով նշում է՝ մինչ ամուսնանալն այդ ամենի մասին ընդհանրապես պատկերացում չունեին, միայն գիտեին, որ բարդ ու պատասխանատու ուղի են մտնում: Այժմ արդեն փորձում են պատվով հաղթահարել բոլոր փորձությունները: «Ընտանեկան փոխհարաբերություններում առաջացած խնդիրներից չի կարող խուսափել ոչ մի նորաստեղծ ընտանիք: Տարիների ընթացքում մեզ հաջողվեց տարբերել գլխավորը երկրորդականից, ընդունել ու զնահատել միմյանց արժեքային համակարգերն ու նպատակները, անհրաժեշտության դեպքում գնալ փոխգիշուրների, հասկանալ՝ ում համար կարելի է ապրել, ամեն մի երեխայի հետ էլ առավել ամրանալ որպես ընտանիք»:

Սիմոնն ասում է, որ Ասյայի մեջ ինքն ի սկզբանե զնահատել է ինտելեկտը, կամային հատկությունները, ինքնուրույնության ձգտու-

մը, նախաձեռնումների ուղորտում ինքնատիպ լինելու հատկությունը, կյանքում կայացած լինելու ցանկությունը: Ասյային էլ գրավել է ապագա ամուսնու չափից ավելի քաղաքավարի, կիրթ, զուսպ և ռոմանտիկ լինելը, կնոջ հանդեպ ցուցաբերած ուշադրությունն ու նրբանկատությունը: «Սիմոնի ռոմանտիկ պատկերացումներն

Սիմոնի խոսքով՝ ընտանիքում կարևոր են սերն ու հարգանքը, համբերությունն ու փոխըմբռնումը, հանդուրժողականությունն ու հարաբերություններում կեղծիքի բացակայությունը, նեղ պահերին միմյանց հեճարան լինելու պատրաստակամությունը: Ասյան նկատում է, որ մարդիկ իրենց բնորոշում են որպես ներդաշնակ,

դիտանկյունից: «Ընտանիքում անհաշտությունների գլխավոր պատճառներից մեկը կնոջ անուշադրության մատնված լինելն է: Եթե կինը զգում է, որ անտեսված է ամուսնու կողմից, առաջանում են շատ խնդիրներ: Իմ խորին համոզմամբ՝ ընտանիքում տրամադրություն ստեղծողը կինն է, ու եթե նրա մոտ ամեն ինչ կարգին է, ինքնըստինքյան ամեն բան իր տեղն է ընկնում՝ ապահովելով ընտանեկան մթնոլորտի խաղաղությունը: Նաև կարևորում են կնոջ՝ ինքն իրեն ընտանիքի լիարժեք անդամ զգալու իրողությունը, դերերի գրեթե հավասարությունը: Ինչու են ասում գրեթե, քանի որ կինն ու տղամարդը երբեք չեն կարող նույն դերակատարությունն ունենալ ընտանիքում ու հասարակական կյանքում, բայց դա չպիտի խանգարի կնոջ կայացած, զնահատված և ընդունված լինելուն: Նրա կարծիքը և պետք է հաշվի առնեն ընտանիքում, համոզված է Ասյան, իսկ Սիմոնն էլ հարցը եզրափակում է այսպես.՝ որպեսզի հետագա սերունդների դաստիարակությունը ճիշտ հիմքերի վրա դրվի, տղամարդը պիտի քննարկի ու վերլուծի խնդիրները կնոջ հետ, հաշվի առնի նրա կարծիքը, բայց տղամարդու խոսքը պիտի լինի վերջնական: Ասածս, իհարկե, սխալ կարծիքներին և որոշումներին չի վերաբերում»:

րեխա կապը: «Մենք փորձում ենք այն ամենը, ինչ հասկացել ենք մեր իսկ ստացած դաստիարակության արդյունքում, ինչ տեսել և ուսումնասիրել ենք գիտակցական կյանքում, կոորդինացնել ու փոխանցել մեր երեխաներին»,- նշում է Սիմոնը: Ասյան էլ հայտնում է իր մտահոգությունները, որ ներկայումս մարդիկ այնքան էլ լուրջ չեն վերաբերում «ընտանիք» հասկացությանը, ինչ-որ առումով համարում ավելորդ բեռ, ամուսնանալու դեպքում էլ հաճախ չեն կարևորում ընտանիքի դերը, և այն՝ որպես ազգապահպան համակարգ, արժեզրկվում է:

Հավելենք, որ երեխաների դաստիարակության հարցում մեր գրուցակիցները կարևորում են կրթությունը, հայրենասիրությունն ու սերն ընդհանրապես իրենց շրջապատող աշխարհի նկատմամբ: Դաստիարակության ողջ ընթացքում ամուսիններն ապահովում են սիրո ու ջերմության մթնոլորտ: Երեխաներն էլ իրենց պահանջկոտությամբ սովորեցնում են այդ ամենը հավասարաչափ բաշխել իրենց երեքի միջև, որ ոչ ոք ուշադրության պակաս չունենա:

Ամուսինները խոստովանում են, որ երազում են բարեկեցիկ, հետաքրքիր ու երջանիկ կյանք ապահովել երեխաներին, սովորեցնել կյանքը չընկալել որպես բեռ, այլ տեսնել նրա գեղեցիկ ու լուսավոր կողմերը:

Ասյան էլ անկեղծանում է՝ իր ստեղծած ընտանիքը շատ քիչ է տարբերվում իր երազած իդեալական ընտանիքից: Իսկ Սիմոնը հետաքրքիր դիտարկում է ամուսն. «Ես շատ վաղուց հրաժարվել եմ իդեալներից: → Էջ 8



ընտանեկան հոգսերի ու զբաղվածության պատճառով այժմ երբեմն հետին պլան են մղվում, բայց տարիների ընթացքում ես բացահայտեցի ու զնահատեցի շատ այլ դրական հատկանիշեր՝ ընտանեկան կյանքի ու աշխատանքի ճիշտ կազմակերպում, ժամանակի օպտիմալ օգտագործում, պատասխանատվության մեծ զգացում, ամեն մի նոր սկսած գործ հաջողությամբ ավարտին հասցնելու ունակություն, նպատակավարություն և այլն: Ինքս բռնկում անձնավորություն եմ և ամուսնուցս սովորել եմ լինել առավել համբերատար»:

սիրառատ ու խենթություններ սիրող զույգ:

Սիմոնն ընտանիքների հաջողության գրավականը տեսնում է հաշվեկատ չլինելու մեջ: «Ինչպես նաև կարևոր է կանոնակարգվածությունը, անգամ զգացմունքային հարաբերություններում պիտի խառնաշփոթ չլինի: Ես արժևորում եմ նաև այն, որ սեփական ամօր ընտանիքից չպիտի վեր դասես, չկենտրոնանաս ինքդ քո «ես»-ի վրա, որ դա հանկարծ չբերի անպատասխանատվության ու ընտանեկան խնդիրների առաջացման»:

Ասյան էլ հարցին մոտենում է կնոջ



ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՄՆԱԴՐՎԵՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Եզանից ո՞վ իր կյանքը կտա ստի համար: Դու կարո՞ղ ես ամենակարևոր բաներից հրաժարվել, թողնել հարմարավետ ու բարեկեցիկ կյանքը, դառնալ բոլորի կողմից հալածվող, չունենալ մշտական բնակության վայր, չիմանալ, թե վաղն ինչ է սպասվում քեզ... Ու պատրաստ լինել մեռնել հանուն այն խոսքի, որը դու քարոզում ես...

Ստի համար ոչ մի մարդ նման զոհողության չի գնա...

Բացառվում է: Միայն ու միայն ճշմարտության համար են ապրում ու կյանքը տալիս, առանց կասկածելու զնուն զոհողության:

Ճշմարտությանն անվերապահ հավատալով է, որ Քրիստոսի 12 առաքյալները հաջողեցին իրենց առաքելության մեջ: Նրանք տեսել էին Փրկչին, երեք տարի ապրել Նրա հետ: Ու եթե անգամ Քրիստոսի խաչելության ժամանակ ինչ-որ կասկած էին ունեցել, հուսահատվել, անգամ ուրացել էին Հիսուսին, երեք օր անց Քրիստոսի Հարությունը ամբողջությամբ փոխել էր նրանց: Բայց այդ երեք օրերը նրանց համար ծանր օրեր էին՝ հուսալքության, հիասթափության, անորոշության ու վախի օրեր...

Կասկածամիտ տղամարդիկ չհավատացին յուզաբեր կանանց, թե Տիրոջ գերեզմանը դատարկ է: Շտապեցին իրենց աչքով տեսնելու... Ու մինչև Քրիստոս չհայտնվեց նրանց, մինչև կասկածամիտ թո՛ղմասը չչոչափեց խաչյալի ձեռքերի վերքերը, չհավատացին...

Այո՛, Քրիստոս Հարություն էր առել... Հարություն էր առել, ինչպես խոստացել էր: Նա երեք օր անց կառուցել էր այն տաճարը, որ մարդիկ քանդել էին... Տեղի էր ունեցել անհնարինը: Ու այդ անհնարին ճշմարտությունով զինված առաքյալները մինչև իրենց կյանքի վերջ առանց հուսահատվելու, առանց տխրելու գործեցին: Պատմեցին, մկրտեցին, բժշկեցին... Ու մեծ մասը նահատակվեց:

Եթե Քրիստոս Հարություն չառներ, քրիստոնեություն չէր լինի... Ու ով հավատում է, նա ապրում է հավերժ... «Եթե մե-

ռելների հարություն չկա, ապա և Քրիստոս Հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա Կորնթացիս 15:13-14):

Արդեն 2000 տարի քրիստոնե-



աներս նշում ենք Քրիստոսի Հարությունը: Ամեն տարի մենք հավաքվում ենք այդ իրողության շուրջ: Եվ դա պարզ հավատք չի, դա միավորող, բուրդիս մեկ դարձնող, բուրդիս հավասար դարձնող իրողություն է... Որովհետև եթե Փրկիչը Հարություն է

առել, ուրեմն մեր կյանքն իմաստ ունի, իսկ Քրիստոսով փրկությունը՝ հավերժության մեջ ապրելու հնարավորությունն է:

Հենց այդ Հարությամբ հավատալով է, որ 2000 տարի հայ մարդը ապրել է այս աշխարհի

դեմ հեթանոսական մշակույթների, չի պաշտելու նյութական կրակը, այլ վերադառնալու է իր նախնիների հավատքին, դարձի է գալու, դեմքով դառնալու է դեպի Հայկ Նահապետի Աստվածը... Այն Աստվածը, Ումից չիրաժարվելու համար Հայկը կռվեց ու հաղթեց աշխարհակալ Բեիին...

Քրիստոսին հավատացող վարդապետ սուրբ Մաշտոցը տեսիլքով երկնեց 36 զինվոր-տաները հայոց, որոնք բանաձևեցին հայ մարդու ինքնությունը, հազարանյակներով եկած, պատմական վայրիվերումներով անցած, արժեհամակարգը ներսում պահած, բանավոր մշակույթով արժեքներ ու աշխարհայացք փոխանցած ժողովրդի ինքնությունը:

Քրիստոս Հարություն է առել... Եվ ամեն տարի յուրաքանչյուրիս սրտում յուրովի Հարություն է առնում Աստվածորդին, մեր ամենօրյա կյանքը լցնում է արարելու, ստեղծելու և հաղթելու զորությամբ:

Նույն ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՆԿԻՐՅԱԼՆ ՈՒ ՋԱՅԱԿԻՐԸ

Ենթագրություններ կան, որոնք միայն անձին չեն պատկանում: Դրանք ներհյուսված են ազգի ճակատագրին և պատկանում են մեր ազգի մշակույթի, գիտության պատմությանը: Նրանցից մեկը ակնավոր ցեղասպանագետ, բանագետ, ժողովրդագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Վերժինե Սվազյանն է, որը ժողովրդի հիշողությունն ու պատմությունը անմար կանթեղի պես պահել ու փոխանցել է սերունդներին:

Ծնվել է 1934 թվականի մարտի 1-ին՝ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: 1947-ին Սվազյանների ընտանիքը հայրենադարձվել է Մայր Հայաստան: 1956 թ. Վերժինե Սվազյանը գերագնացությամբ ավարտել է Երևանի խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական բաժինը: 1958-1961 թթ., հայտնի ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի գիտական ղեկավարությամբ, ուսումը շարունակել է ԳԱ ասպիրանտուրայում՝ «Հայ ժողովրդական բանահյուսություն» մասնագիտությամբ: Ասպիրանտական ուսումնառության ընթացքում եղել է Ս. Աբեղյանի անվան թոշակառու: 1961 թվականից մինչև օրս աշխատում է ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ 1996-2004 թթ. հրավիրվել է նոր հիմնադրված ՀՀ ԳԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: 1996-2018 թթ. եղել է հիշյալ ինստիտուտներում, ինչպես նաև Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդների անդամ:

Նա իր արժանավոր մեծ հորից՝ ազգային-քաղաքական գործիչ Միհրան Սվազյանից (Սվազլը) և Ջյուլիանայի աղետից մազապուրծ հորից՝ Եգիպտոսի գրող, հրապարակախոս, ծաղրանկարիչ, հասարակական գործիչ Գառնիկ Սվազյանից ժառանգել է ոչ միայն նրանց «Հայրենասիրությունը արժանապատվության խնդիր է» պատկանը, այլև նրանց գաղափարները: Նրա հայրը, լինելով հայրենադարձության և ազգահավաքի գաղափարախոսը, մեծ

ազդեցություն է ունեցել դստեր հոգեգիտակցական աշխարհի ձևավորման վրա:

Սկսած 1955 թվականից՝ տակավին ուսանողական նստարանից, ավելի քան 65 տարիների ընթացքում Վ. Սվազյանն անձնական նախաձեռնությամբ և արևմտահայի արյան կանչով գրառել, ուսումնասիրել և հրատարակել է Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Փոքր Ասիայի ավելի քան 150 հայաբնակ տեղավայրերից տարագրվածների տարբեր բարբառներով հաղորդած ժողովրդական բանավոր ավանդույթի նշխարները:

Եվ այդ վիթխարի ժառանգության հետևում դժվարին կյանքի ճանապարհ կար՝ ազգին ու նրա պատմությանը անմնացորդ նվիրումի տարեգրությամբ...

Հայոց ցեղասպանության մասին բազմաթիվ ուսումնասիրություններ են լույս տեսել: Բայց նրանցում բացակայել է պատմության վկայի՝ ցեղասպանության ողբերգությունն ապրած ժողովրդի ձայն՝ ականատես-վկա վերապրողների հուշվկայությունները, որոնք իրավարար վճիռ են ունենալու պատմական արդարության համար պայքարի գործում:

...Տիկին Սվազյանի՝ Հայաստանի և Սփյուռքի գիտական հանդեսներում ու պարբերական մամուլում լույս տեսած շուրջ 500 գիտական և հրապարակախոսական հոդվածները, ընդ որում՝ տարբեր լեզուներով շուրջ 30 գրքերում ամփոփված են հայ ժողովրդի պատմական հիշողությունն ու բանավոր մշակույթի կորստից փրկված նշխարները:

Վերժինե Սվազյանի՝ ավելի քան վեց տասնամյակ տևած այդ տքնաջր աշխատանքի ու նվիրումի արդյունքը՝ «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ» սովորածավալ կործանարար աշխատության առաջին հրատարակությունն է (2000 թ.), որտեղ ներկայացված են մեր զավթված երկրի 150 տեղավայրերից բռնի տարագրված և աշխարհով մեկ սփռված ականատեսների վկայությունները: Հրատարակվել է նորանոր վկայություններով համալրված՝ արդեն 700 միավոր դարձած նրա «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների

վկայություններ» (հայերեն և անգլերեն՝ 2011 թ., բուրբերեն՝ 2013 թ., Ստամբուլ) ծավալուն ուսումնասիրությամբ և բազմաբնույթ տեղեկատվական ցուցիչներ ու ծանոթագրություններ պարունակող, պատմաքաղաքական բացառիկ արժեք ներկայացնող սույն սովորածավալ եռալեզու հատորները: Վերժինե Սվազյանն այն գիտնականն է, որը բնորոշեց և գիտական հիմքի վրա դրեց հուշապատումի ժանրը, և սա նրա ներդրումներից մեկն է հայ բանագիտության ու ցեղասպանագի-



Վերժինե Սվազյան

տության անդաստանում: Այդ հատորները լույս են տեսել ՀՀ ԳԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, նաև ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդների որոշմամբ:

Այժմ նա աշխատում է «Արևմտահայոց թուրքալեզու բանահյուսությունը» ուսումնասիրության վրա, քանի որ գրառումների ընթացքում նրա ուշադրությունից չեն վրիպել նաև արևմտահայ բանասացների հաղորդած թուրքալեզու բանավոր նյութերը, որոնք ևս հայ ժողովրդի մշակութային

հարստության մասն են կազմում:

Անընդգրկելի է Վերժինե Սվազյանի՝ միջազգային գիտաժողովների մասնակցության աշխարհագրությունը՝ Ռուսաստան, Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Կանադա, Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա: Հաղթահարելով բազում խոչընդոտներ՝ ամենուր շարունակել է հետևողականորեն հայտնաբերել և գրանցել Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողներին, նաև տարբերույթ բարբառներով նրանց հաղորդած բանահյուսական նշխարները:

Վերժինե Սվազյանի ծննդյան 90-ամյա հոբելյանն օրերս նշեցին գիտական լայն շրջանակներում՝ ՀՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, ինչպես նաև Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Նշենք, որ բազմավաստակ գիտնականն արժանացել է հայրենական և արտասահմանյան ավելի քան երեք տասնյակ պարգևների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության գործում նշանակալից ավանդ ներդրելու համար ՀՀ նախագահի Առաջին մրցանակի և «Ոսկե հուշանշան» (2006), «Մովսես Խորենացի» մեդալի (2013): 2016 թ. գիտության և կրթության բնագավառում ունեցած վաստակի համար շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործիչ պատվավոր կոչում: Գիտական շրջանակներում Վերժինե Սվազյանի «Հայ բանագիտության Մեծ Տիկին» են կոչում, քանի որ նրան իրավամբ համարում են հայ բանագիտության ռահվիրա Գարեգին Սրվանձտյանցի գործի արժանի շարունակողը:

«Շողակն Արարատյան» թերթի խմբագրությունը ևս սիրով շնորհավորում է տիկին Սվազյանի հոբելյանը: Շնորհակալություն Ձեզ, մեր ազգի պատմական հիշողության ու բանավոր մշակույթի պահպանման մեծ Հայուհի և, ինչպես Ձեզ իրավամբ 2008 թ. բնորոշել է Ամերիկյան կենսագրական ինստիտուտը, 21-րդ դարի Մեծագույն Միտք...

Ապրեք երկար ու շարունակեք Ձեր ներկայությամբ պատվել բոլորիս:

Հասնիկ ՊՈՂՈՍՅԱՆ

«ԱՅՆՎԱՍԻԿ ԵՄ ՄՈՒԽ ԵՄ ՏԻՐՈՋ ԱՂԱԽԻՆԸ»

Ղուկաս Ա 38

Արիլի յոթը Սուրբ Աստվածամորը տրված ավետման օրն է, որը նաև ողջ մարդկությանը տրված ավետիս է: Սուրբ Գրքի այս դրվագում դյուրությամբ կտեսնենք մարդու կյանքի ողջ պատկերը. Աստվածամայրը հնազանդվեց Արարչի կամքին՝ նպաստելով մարդկության փրկագործության ծրագրի իրականացմանը:

Սուրբ Կույսի հավատավոր հոգով և խոնարհ սրտով պայծառ կերպարը ներշնչման աղբյուր է օրինակ պետք է լինի յուրաքանչյուրիս համար, որպեսզի ջերմ հավատքով ու նվիրումով ապրենք մեր կյանքը և ցանկացած իրավիճակում խոնարհաբար հայտնենք առ Տեր ունեցած մեր հնազանդությունն ու Նրան ծառայելու պատրաստականությունը:

Սուրբ Գրիգոր Տաթևացին շեշտադրում է անբովանդակելի Աստվածության Հուրն առանց այրվելու իր որովայնում կրած Սուրբ Կույս Մարիամի կարևորությունը քրիստոնյայի կյանքում՝ բնութագրելով նրան հետևյալ խոսքերով. «Աստվածը նկատ հարս, աստվածաբնակ տաճար: Նախահոր փրկիչ, նախամոր ազատիչ: Օրենքի ավետում, սովերի դադարում, անհարսնացյալ հարս, երկնային առաքաստ, մեղավորների հույս, նեղյալների ապավեն, տրտմածների ուրախություն, վշտացածների մխիթարություն, Եկեղեցու պարծանք, հավատացյալների առ Աստված աղերս»:

Սրբուհու միջոցով խաչը ծագեց

աշխարհի մեջ՝ որպես գործության գավազան և կնիք ամենքի համար՝ պահպանելու մարդկության ելն ու մուտը: Նրա միջոցով



«Աստվածածինը մանկան հետ»
Նկարիչ՝ Լիանա Առաքելյան

բացվեց Կենաց ծառի ճանապարհը և հաստատվեց Մկրտության ավազանը:

Արդ, երբ սրբուհու վարքը դարձնենք մեր կյանքի անփոխարինելի դասն ու օրի-

նակը, ամեն բան կկարգավորվի Աստծո հովանու ներքո, քանզի ներկայիս ծանրագույն ժամանակներում, երբ աշխարհում նկատվում է բարոյական արժեքների անկում, իսկ Հայրենիքը նավարկում է փորձությունների օվկիանոսում, պետք է Սուրբ Աստվածածնի նմանությամբ արիության և զոհաբերության ոգով առաջնորդվել՝ ի նպաստ ընտանիքի պայծառության, ամրության և երջանկության, ազգային-ընտանեկան արժեքների պահպանման:

«Ուրախ լըր, բերկրեալ, Տեր ընդ քեզ է» (Ղուկաս Ա 28):

«Ձի Աստուած ընդ մեզ է»: Որքան հավատ և ուրախություն է բովանդակում այս արտահայտությունը: Մի պահ պատկերացրեք Աստծու հոսքին հավատարիմ և Նրա Գալստյանը սպասող մարդու ցնծությունն ու երջանկությունը, երբ արժանանա լսելու այս խոսքերը. «Ողջույն քեզ, ով շնորհընկալ: Ուրախացի՛ր բերկրյալ, Տերը քեզ հետ է»: Իրապես երանելի կլինի այդ մարդը: Արդ, պատկերացրեք, թե որքան առավել երանելի էր նա, ով իմացավ, որ շուտով Աստվածամայր կդառնա՝ փառավորելով սրբություն, մաքրություն, մարդկային կյանքեր պարզադուր և սնուցող, կրթող ու մեծացնող վեհագույն գաղափար՝ մայրությունը:

Անշուշտ, Մարիամը շփոթվեց, երբ Գաբրիել հրեշտակն ավետեց, որ նա պետք է հղանա և Մեսիայի մայրը դառնա, բայց և ընդունեց իրաշարժ ավետիսը խոնարհությամբ՝ ընծայվելով աստվածա-

յին կամքի կատարմանը. «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը» (Ղուկաս Ա 28, 38) և դառնալով այն մաքուր անոթը, որի միջոցով ծնվեց Աստծու Որդին՝ Հիսուս Քրիստոս: Սրբուհին երբեք չտեսանվեց և թերահավատ չգտնվեց, այլ իր անսահման խոնարհությամբ ցույց տվեց, որ Աստծու կամքը վեր է երկրային ամեն ինչից:

Սուրբ Աստվածածինը ճշմարիտ մոր, Աստծու կամքին անվերապահ հնազանդվող և իր առաքելությունը գիտակցող մարդու օրինակն է, ով ոչ միայն ծնեց աշխարհի Փրկչին, այլև տառապեց ու ցավ ապրեց՝ իր միակ զավակին տալով մարդկության փրկության համար: Տիրամայրը դարձավ մեծագույն բարեխոս ի Տեր բոլոր հուսացողների համար:

Եվ արդ, օրինյալ ու լուսանորոգ օրվան ընդառաջ, առաջնորդվենք Աստվածամոր կերպարով, հետևենք նրա սուրբ վարքին և հաղթահարենք մեզ բաժին հասած փորձություններն առ Աստված աղոթքով ու անսասան հավատով՝ ապավինելով Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի բարեխոսությանը. «Մայր Սուրբ սքանչելի լուսոյն, որ գևստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի թում կրեցեր, եւ ցնծութիւն աշխարհի ծնար գբանն Աստուած, աղաչենք: Մայր Սուրբ, բարեխօսեա՛ն»:

Ազգն անհաղթելի է հավատի իր ապրուստով և գործությամբ:

Պատրաստեց
Լաուրա ԱՂԱՋՆՅԱՆԸ

ՍԵՐՔԱՆՅ ԿՅԱՆՔ

ՄԻՈՂՐԱԳ ՎԱՐՊԱԿԵՏՅԱՆԸ ԵՎ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ


Եղանկարիչ և գրքի գեղարվեստական ձևավորող Միոլդրագ Վարդապետյանը հայտնի անուն է Սերբիայում: Ծնվել է 1933 թվականին՝ սերբական Մլադենովաց քաղաքում: Հայրը՝ Վահան Վարդապետյանը, ծնունդով Քենտախից էր: Սերբիա էր փոխադրվել 1908 թվականին: Մայրը՝ Անիկ Դազանչյանը, պոլսահայ էր: 1915-ի Հայոց մեծ եղեռնից հետո նա հեռացել էր իր ծննդավայրից և բնակություն հաստատել Բելգրադում:

Նշխարներ Միոլդրագ Վարդապետյանի հուշերից. «1922-ին ծնողներս ամուսնացան Բելգրադի Սուրբ Մարկոս եկեղեցում, ունեցան յոթ երեխա, որոնցից վերջինը ես էի՝ բարեբախտաբար ողջ մնացած միակ արու զավակը: Երեք եղբայրներս փոքր տարիքում հիվանդացան ու մեռան: Իմ ծնվելուց տարիներ անց վախճանվեց հայրս, որին աղոտ եմ հիշում: Տարեց ազգականներս հաճախ էին պատմում իրենց բնակավայրի մասին, որը հայտնի էր սառնորակ ու զուլալ աղբյուրներով: Պատմում էին, թե որքան էին սիրում պատրաստել հայկական տեսակ-տեսակ կերակուրներ: Դրանք անցողիկ, բայց երանելի ժամանակներ էին: Մորիցս ու ազգականներիցս շատ եմ լսել նաև հայերի հանդեպ 1915-ին գործած սարսափազդու ոճիրների մասին: Այդ հուզիչ ու սրտառուչ պատմություններն ինձ ուղեկցել են ամբողջ կյանքում՝ խորը և ցավոտ հետք թողնելով իմ հոգում...»:

1958 թվականին Վարդապետյանն ավարտել է Բելգրադի Կիրառական արվեստի ակադեմիայի գրաֆիկայի բաժինը, որից հետո համագործակցել է իրատարակիչների հետ, ապա տարբեր երկր-

ներում ունեցել ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսներ, որոնք նրան փառք ու ճանաչում են բերել:

Հետագայում Վարդապետյանի հետ Բելգրադում գրուցելու բազում առիթներ են ունեցել: Ամեն անգամ նա նորովի էր



ներկայանում իր բացառիկ ու ինքնատիպ դրսևորումներով, մարդկային նկարագրի լավագույն հատկանիշներով: Խնդրում էի նրան պատմել սերբահայ, մասնավորապես բելգրադահայ գաղթօջախի և անվաճի սերբահայերի մասին: Նրա թախծոտ պատմություններից գառ մեր գրույցները նաև Հայաստանի ու հայ մշակույթի մա-

սին էին: Նա սիրով ու հաճույքով էր լսում պատմություններն ու միշտ երազում էր այցելել Հայաստան:

1990-ականներին իրականացավ նրա վաղեմի երազանքը: Նա երկու անգամ այցելեց Հայաստան, եղավ Քառնիում ու Գեղարդում, Մատենադարանում, հասավ մինչև հինավուրց Դվինի ավերակները, տեսավ Չվարթնոցի հնամենի խոյակները, հիացավ իր ժողովրդի կերտած գանձերով, մանրանկարներով ու նրբախյուս խաչքարերով, երակներում տաք բաբախ գագց, անբացատրելի գզացում համակեց նրան: Ցանկանում էր վերագտնել իր ակունքները, լսել ու զգալ հայոց բառուբանի հնայքը ու հավերժ մայել Արարատի ադամանդե գմբեթներին: Էջմիածնում ու Սուրբ Գայանե եկեղեցու մերձակայքում ինձ արձանագրությունների ու տապանաքարերի առանձին մանրամասներ պատճենեց, որ դրանք հետագայում շաղախի իր ստեղծագործություններին: Հայաստանյան այցից հետո Վարդապետյանի ստեղծագործական ներկայանակին ավելացան նաև նախնյաց երկրի գունեղ ու հյուսիսի պատկերները, որոնք խթան հանդիսացան ստեղծելու ազգային շեշտադրումներով նոր գործեր:

Արդեն 15 տարի է՝ Միոլդրագ Վարդապետյանը մեզ հետ չէ: Նրա ծննդյան 90-ամյակի առթիվ Բելգրադում 2023 թվականին լույս տեսավ «Միոլդրագ Վարդապետյան-Վարտա և գեղանկարիչների նրա ընտանիքը» հոբելյանական բացառիկ ալբոմը, որը ներառում է արվեստագետի տարբեր տարիներին արված աշխատանքները, նրա մասին սերբ անվանի արվեստաբանների գրախոսականները, անհատական բազմաթիվ ցուցահանդես-

ների մասին պատմող նյութերը: Ալբոմում ներկայացված են նաև գեղանկարչի կնոջ ու զավակների ստեղծագործությունները: Տեղին է նշել, որ Վարդապետյան ընտանիքի բոլոր անդամները արվեստի մարդիկ են: Կինը՝ Դուշանկա Վարդապետյանը, որդին և դուստրը՝ Դավիթ և Անամարիա Վարդապետյանները, գեղանկարիչներ են, որոնց ջանքերով լույս է տեսել այդ հրաշալի հրատարակությունը:

Ալբոմը հարուստ է գեղանկարչի կյանքին ու գործին վերաբերող ինքնատիպ ակնարկով և լիարժեք պատկերացում է տալիս Վարդապետյանի անցած բեղմնավոր ուղու մասին: Ներկայացված են նրա գրաֆիկական, պատկերով արված աշխատանքները, կուլմեները, բազմաթիվ գրքերի ձևավորումները, արժեքավոր տասնյակ լուսանկարներ, որոնցում վավերացված է անվանի արվեստագետի անցած փառավոր ուղին: Սերբական և օտարերկրյա շատ թերթեր նրա ստեղծագործությունների մասին հիացմունքով են արտահայտվել՝ ներկայացնելով Վարդապետյանի որպես մեր ժամանակների լավագույն արվեստագետի, գրաֆիկական ժանրի վարպետի և գրքի գեղարվեստական ձևավորողի: Նրա մասին գրել են նաև սերբ անվանի արվեստաբաններ Նիկոլա Կուսովացը, ակադեմիկոսներ Դեյան Մեդակովիչը, Վոյսլավ Զուրիչը և նշանավոր այլ մարդիկ:

Միոլդրագ Վարդապետյանի կյանքին ու գործին նվիրված այս հրաշալի հրատարակությունը մեր հայրենակցի հիշատակին և նրա թողած մշակութային հարուստ ժառանգությանը վերաբերող հարատև հուշարձան է:

Բաբկեն ՄԻՄՈՆՅԱՆ



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅՈՒՆԸ

Սկիզբը՝ թիվ 2-ում

Իրիստոնեական գաղափարախոսությունը երկրի, մարդկանց սրտերում արմատներ ձգելու համար պետք ուներ իրենից առաջ ժողովրդի միս ու արյուն դարձած հեթանոսական գաղափարախոսությունը, սովորույթները իսպառ ջնջել, վերացնել: Այդ է պատճառը, որ հեթանոսական շրջանում ստեղծված մշակույթի արժեքները ոչնչացվում էին հույն և ասորի քարոզիչների կողմից: Քանզում էին մեհյանները, ջարդուփշուր անում արձանները, այրում էին մեհենական մատյանները: Խիստ հալածանք է սկսվում, այսպես ասած, ազատ մտածողության, բանավոր խոսքի ամեն տեսակ արտահայտությունների դեմ, որի ամենաառաջին կրողներն էին գուսանները, ասացողները, կաթավողները, վիպերգուները: Այսպիսով, ոչ միայն գրավոր մշակույթի ու գաղափարախոսության դեմ էին մարտնչում, այլև ժողովրդական բանավոր արվեստին հասցնում էին ծանր հարված: Այդ անցյալի գանձերի մի չնչին մասն է, որ այս կամ այն կերպ թաքնվելով հետագա իրադրությունների մեջ, կերպարանափոխվել ու գրի է առնվել պատմիչների կողմից: Մի չնչին մասն էլ երկար ժամանակ ապրելով ժողովրդի մեջ՝ փոխանցվել է նոր ժամանակների ժողովրդական վեպին՝ «Սասունցի Դավիթ»:

Սա իր մեջ խտացնում է հայ ժողովրդի ոգին՝ հեթանոսական ու քրիստոնեական հրով թրծված, իր բազմակողմանի արտահայտություններով: Այս վեպի ավարտը համընկնում է այն ժամանակաշրջանին, որի մեջ ապրել ու ստեղծագործել է Գրիգոր Նարեկացին: Հետևաբար կարելի է ասել, որ նա ծանոթ էր այս վեպին, եթե հաշվի առնենք և այն հանգամանքը, որ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսը գրի է առնվել նաև Վանի բարբառով: Վանի ենթաբարբառներից մեկը կոչվում է «Նարեկի բարբառ», որով նույնպես գրի է առնվել «Սասունցի Դավիթ»-ը: Այդ նշանակում է, որ ժողովրդական այս վեպը ծանոթ էր Վասպուրականի, Ռշտունիքի, Սասունի բնակչությանը, մանավանդ որ հենց այդ նահանգներում է ձևավորվել այն: Վեպի շատ հատվածներ երգվել են: Ժողովուրդը ուխտի գալով Նարեկավանք, հատկապես Սուրբ Ծննդյան, Հարության, Վարդավառի, Ծաղկազարդի զվարթ տոներին բազմաթիվ ավանդավեպերի հետ երգել և պատմել է նաև «Սասունցի Դավիթ»-ը: Նարեկացին անուշտ հրավիրվել է խնջույքի, մատաղի սեղաններին, որոնք բացվում էին վանքի բակում կամ Վանի լճի ափին: Գուսանները ներկայացնում էին ամբողջ վեպը, մանավանդ որ այդ անելու համար շատ բան հարկավոր չէր: Երկու հոգին էլ բավական էր, մեկը՝ պատմելու, մյուսը՝ նվագարանի վրա երգելու համար: Վեպի մեջ առկա են հեթանոսական շրջանից եկող սովորություններ, երևույթների, իրերի նկատմամբ ունեցած յուրահատուկ պատկերացումներ: Հիշենք, թեկուզ, կրակով մկրտվելու դեպքը, մանուկ Դավիթի կրակով փորձելը, ջրի աստծու հետ նույնացող Սանասարին ու Բաղդասարին, Վահագնի ուժն ու զորությունը ունեցող Փոքր Միերին և շատ այլ դրվագներ:

Ավանդավեպը լեցուն է հանգավոր հատվածներով, որոնք ստույգ երգվել են «Գուսանի երգը», «Թորոսի երգը», «Հարսների հրաժեշտի երգը», «Դավթի հրաժեշտի երգը»: Ահա պառավ արտատիրոջ խոսքը ուղղված Թլոր Դավիթին.

Մագյար չըկա՞ր քո հոր Թուրն Կեծակին,
Մագյար չըկա՞ր քո հոր Քուռկիկ Ջալալին,
Մագյար չըկա՞ր Քուռկան Ուլն պողպատի,
Մագյար չըկա՞ր քո հոր Գյամն պողպատի,
Որ դեն Քուռկիկ Ջալալու բերնին...

Այստեղ ոչինչ ու կշռույթ, ձևական անորսալի նրբերանգները հուշում են շատ ավելի կարևոր մի երևույթի մասին: Նարեկացու «Մատյան ողբերգության» պեմի որոշ հատվածների և այս կտորի միջև կա ուղղակի թե անուղղակի, ընդհանրություն: «Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպում պառավ արտատիրոջ խոսքը ուղղված Դավիթին՝ պատասխանն իր մեջ պարունակող հարցումների մի շղթա է: Հարցնում է կինը ու չի սպասում պատասխանի, որովհետև իր հարցումը նաև պատասխան է: Այդ հարցում-պատասխանի մեջ կա անսահման սեր, քնքշանք, հանդիմանություն, ամեն ինչ իմացողի բարեհոգի հեզմանք: Եվ պատահական չէ, որ պառավի խոսքերը Դավիթը ընկալում է ոչ իբրև հարց, այլ՝ պատասխան: Նարեկացին ևս ուղղում է իր հարցումները Բարձրալիքն՝ առանց պատասխան սպասելու: Նա գիտի ամեն ինչ: Նրա հարցումը իր մեջ պարու-

նակում է պատասխանը:

Գրիգոր Նարեկացին համոզված է, որ Տերը չի լքի, երեսի վրա ընկած չի թողնի իրեն ու իր նմաններին: Հենց այդ համոզմունքն է, որ հեղինակին վստահություն է ներշնչում այդպես անմիջականորեն, մարդկային լեզվով պարզ ու անպաճույճ դիմել նրան: Միևնույն է, նա միշտ, ամեն դեպքում ներելու է: Միայն թե՛ հերոսը պետք ունի ինքն իրեն համոզելու, հավատը ամրապնդելու, որ երկմտության որդը չկրծի իր հոգին:

Որտեղի՞ց են բխում նման ընդհանրություններ: Նարեկացին ծանոթ է եղել, ինչպես հեթանոսական շրջանի ժողովրդական բանահյուսության գրավոր և անգիր արժեքներին, այնպես էլ՝ «Սասունցի Դավիթ» ժողովրդական էպոսին: Ինչո՞ք է նրա ստեղծագործություններն ուսումնասիրելիս ազդեցության հարցի մասին խոսել: Նարեկացին օգտվել է ոչ թե արաբական, պարսկական, ասորական, հունական մշակույթներից, այլ հայ մշակույթից: Հայ մշակույթն իր բոլոր դրսևորումների մեջ ճիստությամբ, հնությանը, կուտակած արժեքներով չի գիշում վերոհիշյալ ժողովուրդների մշակույթներին: Ոչ միայն հարստացել է նրանց ունեցածով, այլև հարստացրել է նրանց ունեցածը...

Սասուն Վարդանյան, «Գրիգոր Նարեկացին և իրն հայկական բանահյուսությունը», անտիպ էջեր

Պատրաստեց Սիլվա ՍՈՒԲԱՅԱՆԸ

ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐԵԿՑԱՆՔ

«Միմյանց հետ եղևք քաղցր, գթած՝ ներելով միմյանց, ինչպես որ Աստված ներեց մեզ Քրիստոսով»:

Եփեսացիս 4:32

արությունը և կարեկցանքը մեծ ուժ ունեն մեր կյանքում: Չարիքը, որը հարուցվում է վատ խոսքերով, շրջապատի հանդեպ սառը անտարբերությամբ, ուրիշի զգացմունքները ըմբռնելու բացակայությամբ, մշտական կասկածանքով՝ մեղմվում է և ծածկվում միայն բարու ազդակով, միայն սիրո դրսևորմամբ: Սերը մարդկանց մեջ փնտրում է բարին, ոչ թե՛ չարը, իսկ որտեղ բարին չի գտնում, սգում է չարիքի վրա և դատապարտելու փոխարեն փորձում է ուղղել այն: Այդ պարագայում մեր լավագույն զգացմունքների ավելցուկը կենդանի հոսքով հեղվում է մեր մտերիմների վրա: Սիրելով նրանց՝ մենք մեզ իրենց տեղն ենք դնում և վարվում նրանց հետ այնպես, ինչպես կցանկանայինք, որ մեզ հետ վարվեին, կատարելով Տիրոջ կողմից մեզ պատվիրված ոսկե կանոնը: «Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես և դուք արեք նրանց, որովհետև այդ իսկ են Օրենքն ու մարգարեները» (Մատթեոս 7:12): Սենք տառապում ենք նրանց

վշտերից և կարիքներից, ասես անծանր մերը լինի: Ավետարանից մեջբերված այս ոսկե օրենքն իր մեջ մեծ իմաստ ունի, որովհետև, երբ մարդ միայն իր անձի մասին է մտածում և սպասում, որ բոլորն իրեն գովաբանեն ու փառաբա-

որևէ հաշվեկատար դրսևորում թե՛ անցյալ, թե՛ ներկա, թե՛ գալիք ժամանակներում, այլ պատվիրում է ուրիշի նկատմամբ բարիք գործել, բարի վարմունք ունենալ: Եվ այսպես, «Որպես Աստուծո ընտրյալներ, սրբեր և սիրելիներ,

3:12-14): Ոչ մի երկրային բարիք չի կարող համեմատվել այդ հոգեկուզական տրամադրության հետ, որը Պողոս առաքյալն այս խոսքերով է նկարագրել: Որքան հաճախ ենք մենք զգացել սիրո և երկայնամտության ուժը: Որքան հաճախ, մեր կյանքի դժվարին պահին, բարի և քնքուշ խոսքով ջերմացած, մենք կրկին տեսնում ենք այն լույսը, որը վաղուց անհետացել էր մեզ համար:

Սերը, որը կոչվում է «կատարելության ամբողջություն», կենդանի աղբյուր է, ուրախությամբ հորդող աղբյուր: Այն թափվում է իր լիությունից նաև ուրիշների վրա՝ վերածվելով սիրո անսպասելի հոսքի: Երբեք չսպառնալով՝ նա անխնայ շտապում է ավելի հեռու, դեպի հավերժություն՝ ճանապարհին ու նոր պտուղներ բերելով:

Մի անգամ հայտնի ծեր միսիոների մոտ հավաքվել էին բազում մարդիկ, ովքեր իրենց կյանքը նվիրել էին աղքատներին ծառայելուն և ցանկանում էին նրանից լսել իմաստուն խրատներ: Նա երկար խոսեց, զարմանալի ազդեցիկ ուժով և խոսքն ավարտեց հետևյալ բառերով: «Ուզո՞ւմ եք իմանալ այն երեք պայմանները, որոնք անհրաժեշտ են ձեզ, հոգով և մարմնով մահացող մարդկանց

շրջանում հաջող գործունեություն ծավալելու համար: Առաջին պայմանը՝ լինել բարի, երկրորդը՝ լինել բարի, երրորդը՝ լինել բարի: Ահա թե ինչ են սովորել ես իմ երկար տարիների փորձից»:

Հիշենք ու կիրառենք մեր կյանքում այն մարդկանց պատգամները, ովքեր իրենց կյանքով օրինակ են եղել բարության և կարեկցանքի: Իր բարոյը կյանքը աղքատներին և հիվանդներին նվիրած Մայր Թերեզան ասում էր. «Սենք կարող ենք ազատվել հիվանդությունից դեղերի միջոցով, բայց միակ դեղամիջոցը միայնության, հիասթափության և անհուսության դեմ սերն է: Աշխարհում շատ մարդիկ կան, որոնք սովից մահանում են, բայց ավելի շատ են նրանք, որոնք մահանում են սիրո պակասից»:

Շարունակելով մեջբերել մեծագույն բարության մարմնավորումը հանդիսացող Մայր Թերեզայի մտքերից՝ ցանկանում են, որ յուրաքանչյուր մեր կյանքում դեղ և դարման դառնանք մոտիկների և հեռուների, ծանոթների և անծանոթների համար, քանի որ «ամենամեծ աղքատությունը հոգու աղքատությունն է», իսկ «լավագույն դեղը սերն ու հոգատարությունն է»:

Գայանե ՄԱՐԳԱՐՅԱՆ



մեն, այդպիսինը հիվանդ է: Դժբախտաբար այսօր աշխարհում աճող երևույթներից մեկը ինքն իր մասին մտածելու հոգեվիճակն է: Միշտ են, ուրիշն ինձ համար կարևոր չէ: Ահա մի մտածելակերպ, որը պարզ բառով կոչվում է «անճանախորություն»: Այնինչ ոսկե կանոնի սկզբունքը բացառում է որևէ անճանակալ շահ,

հագեք, ուրեմն, գուժ, ողորմություն, քաղցրություն, խնամարհություն, հեզություն, համբերատարություն՝ հանդուրժելով միմյանց, ներելով միմյանց, եթե մեկը մյուսի դեմ գանգատ ունի. ինչպես Աստված Քրիստոսով ներեց ձեզ, նույն ձևով արեք և դուք: Եվ այս բոլորի վրա հագեք սերը, որ կապն է կատարելության» (Կողոսացիս

ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՅՐ

«Նրա աջ կողմում պիտի լինի քահանայի խաղաղության խորհուրդ՝ երկուսի միջև»:

Չաքարիա 6.13

Ելը մտքիս հեռավոր խորքերը փորփրեց, խորհրդավոր շշմուշակով: «Կյանք ես փնտրում, Հիսուսին փարվիր»: Ապաշխարության հազիվ նշմարվող ճամփով քայլողը մշտապես պիտի կարողանա Շնորհի լույսի մեջ պատսպարվել: Նա Աստվածային Լույսը կնկատի աղոթքի ժամանակ Աստծուց եկող հայտնությունների մեջ, մերձավորի և տարբեր ներշնչանքների միջոցով, այնպես, ինչպես Պողոս առաքյալը հայտնեց. «Աստված է, որ ներգործում է...» (Փիլիպեցիս 2.13):

Երբեմն, երբ աշխարհի բազում փոթորիկների հարվածներից հոգնած՝ փորձում էի խաղաղություն գտնել Տիրոջ բազուկների մեջ, թվում էր՝ դռան մոտ են արդեն: Երջանկությունն ամբողջապես գրկելու այդ փորձերից մեկի ժամանակ տեսա աստվածային Մովսեսը Քորեթի շուրջը սահմանազոծեց և խստությամբ նայեց ինձ (Ելից 19:12): Սահմանն անցնողը կբարկոծվի... Պատմուճանը, որով կարողանալի մուտքը երկնքի Արքայություն, ինքը պիտի գործես՝ բազում նեղ դռների միջով անցնելով և բազում բարի գործեր կատարելով:

Ես հարցրի. «Դու ո՞վ ես: Քո հանճարի սահմանները երևո՞ւմ են: Ցույց տուր այն ինձ, թող քեզ մերձեցան: Խաղաղություն են փնտրում»:

Ինչ գեղեցիկ ու լուսավոր է Փրկության Պատմուճանը Քո, Հիսուս: Այն Քո Չեռքն

ասեղնագործեց Խաչի Սեղանի վրա, որ զաղտնադուռն է մեր փրկության ավետիսի: Թո՛ւյլ տուր Շնորհիդ փարվել, Տեր... Մտքումս ինձ հետ զրուցողն ասաց՝ արի՛:

Ես շարժվեցի առաջ: Հայացքս բարձրացավ, տարածվեց, գնեց ու սահեց սրբություն ճառագող բարձունքների վրայով: Նորից հանդիպեցի Փառավորին: Նա ձեռքը պարզեց ինձ, ուր գրություն կար.

«Ձեր Տեր Աստվածը ձեր եղբայրների միջից ինձ նման մի մարգարե պիտի հանի: Նրան լսեցեք» (Գործք 3.22):

Այնպես մոտ էի, այնքան երջանիկ: Հասկացա, որ դեռ շատ պիտի քայլեմ՝ Քեզ տեսնելու համար: Հաճախ էի սայթաքում, անկուններս երբեմն այնպես ահավոր էին, որ մտածում էի. «Այլևս ինչ իմաստ ունի փնտրելը»: Սակայն՝ «Այն ժամանակ, երբ ոտքս սասանվում էր, Քո ողորմությունն, ո՞վ Տեր, հաստատում էր ինձ» (Մաղմոս 94.18)

Ամբողջ հասակով կանգնում էի փոթորկին դեմ հանդիման և հոխորտում. «Դու իմ վրա մի՛ չարախնդա, ո՞վ իմ թշնամի, թեև ընկնեմ, պիտի ելնեմ...» (Միքիա 7.8):

Պարտության դառնության մեջ, երբ գեթ մի նշույլ շող էի փնտրում անոթալի վիճակից դուրս գալու հույսով, նորից հիշում էի Տիրոջ խոսքերը. «Երբ թշնամին հեղեղի պես գա, Տիրոջ Հոգին պիտի հալածի նրան» (Եսայի 59.19):

Մի օր ես տեսա Նրան: Հեռավոր աղջամուղի մեջ հայտված Նրա հայացքը խիստ մտահոգ էր, բայց Լույսի շող ուներ իր մեջ:

«Գնա՛, ունեցածդ վաճառի՛ր..., արի՛ Իմ հետևից» (Մատթեոս 19.21):

Ունեցածս ի՞նչ է, որ վաճառեմ: Ընդամենը՝ մի սիրտ, աշխարհի անկարգ, անմիտ ցանկություններով լի մի սիրտ, որ մշտապես երկմտության տատանումներով ու վախերով է լեցուն:

Տրտմությամբ լի՝ գնացի խոստովանա-հոր մոտ:

«Հոգնել եմ: Անիմաստ վերելքներից ու անհույս անկուններից այնպես են հոգնել... Թողություն են խնդրում:

Քահանան աջը դրեց գլխիս, մեղմ ժպտաց.

«Երջանիկ ես, եղբայր, որովհետև դռան մոտ ես: Հիսուս դռան ետևում քեզ է սպասում: Թակիր դուռը, և այն կբացվի: Նա Իր թանկ Արյամբ վճարել է քեզ համար:

«Եվ Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդին տվեց...» (Հովհաննես 3.16):

Ապա ազդարարվեց փրկության օրհնությունը.

«Ամեն ինչ կատարված է» (Հովհաննես 19.30):

Ես շփոթվեցի ու արբեցի «Քո բաժակի արբեցումով» (Մաղմոս 23.5):

Քո Պատմուճանի վայելչությամբ անէացա ու թևածեցի բարձրերում: Չյունափր-փուր ամպերը հանկարծ հայտնվեցին ինձանից ներքև: Ես նրանց ճերմակությունը ոչինչ համարեցի Պատմուճանիս վայելչության համեմատ և դարձա ու խոնարհությամբ երկրպագեցի «Տիրոջ Անունով եկողին» (Մաղմոս 118.20):

«Որքան մեծ է Նրա բարությունն ու գեղեցկությունը...» (Չաքարիա 9.17):

Արամայիս ՇԻՍՏԱՆՅԱՆ

ՄԻՄՈՆՆ ՈՒ ԼԱՅԱՆ...

Եջ 5 ←

Դա կաղապարում է այն ամենը, ինչ կարող ես ունենալ կամ ինչին կարող ես հասնել: Միայն կարող եմ ասել՝ մենք ընտանիքում գտել ենք մեր երջանկությունը, այսինքն՝ այն կարևոր կետը, որտեղ ամեն ինչ հավասարակշռված է: Դա մեր ամենամեծ ձեռքբերումն է»:

Ձրույցի վերջում Ասյան բարձրաձայնում է հետևյալ ցանկությունները. «Առաջին հերթին ես Հայաստանին մաղթում եմ խաղաղություն, որ բոլորիս ներաշխարհը մի քիչ հանգստանա, որ ամեն վայրկյան չմտահոգվենք մեր վաղվա օրվա համար, որ մեր գոյությունն անընդհատ վտանգված չլինի: Ցանկանում եմ, որ մեր հայկական ընտանիքներում սեր ու հանդուրժողականություն տիրի, և զույգերը գիտակցեն՝ ընտանիք կազմելը հեշտ է, պահելն է դժվար: Ուստի բոլորիս այնքան կամքի ուժ ու համբերություն եմ մաղթում, որ կարողանանք ամուր պահել մեր ընտանիքները»:

Սիմոն ընտանիք կազմած բոլոր կանանց ու տղամարդկանց, որ արդեն ծնողներ են դարձել, կոչ է անում լրջորեն վերաբերվել իրենց երեխաների հայեցի ու հոգևոր կրթությանն ու դաստիարակությանը՝ որպես հայապահպանության կարևոր գործոններ:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ